ՀՏԴ 929: 891.981 Սևակ

Doi:10.54503/0135-0536-2024.1-172

ՉԱՐԵՆՑ–ԹՈՒՄԱՆՅԱՆՆԵՐ. ՄԻ ԱՆՀԱՅՏ ԷՋ ՉԱՐԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ*

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհ. Թումանյան, Չարենց, Ն. Թումանյան, Չարենցի անհայտ բանաստեղծության սևագրություն, «Գեղարվեստական երկեր» ժողովածու, «Նվեր Նվարդին»:

Նախաբան

Եղիշե Չարենց–Հովհաննես Թումանյան առնչությունները հայ գրականագիտության ուշադրությանն են արժանացել դեռևս անցյալ դարի վերջին տասնամյակներին: Խնդիրն այս կամ այն չափով արծարծվել է թումանյանագետների և չարենցագետների երկերում, հիմնականում՝ «Երեքի» դեկլարացիայի» քննության համատեքստում, նաև՝ Ս. Աղաբաբյանի[1], Ալ. Զաքարյանի[2], Հր. Թամրազյանի[3], Դ. Գասպարյանի[4] աշխատություններում, ամփոփվել վերջինիս «Չարենց» հոդվածում[5], Չարենցի մասին հուշերում[6] և այլն: Ալ. Զաքարյանը Թումանյանի ազդեցությունը նկատել է «Պոեզոզուռնայում»: Նա Չարենցի՝ «Ցերեկները զուռնան արևի //Գիշերները սրինգը լուսնի // Էսպես–Հազար օ՛ր կարևի, // Ու հազար սերունդ կբուսնի»[7] տողերի մեջ տեսնում է «Արևի նման աշխարհին նայելու» Թումանյանի պատգամը[8]: Թեման համապարփակ քննության է ենթարկել ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը: Նա հիմնավոր ու բազմակողմանի քննել է Չարենցի և Թումանյանի գրական աղերսները, անդրադարձել է Չարենցի պոեզիայում ժողովրդական աֆորիզմների, հիպերբոլիկ համեմատությունների, ոճական որոշ միջոցների կիրառման թումանյանական ստեղծագործական փորձի ազդեցությունների խնդրին[9]:

---

* *Ներկայացվել է 25. I. 2024 թ., գրախոսվել է 01. II. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

[1] *Աղաբաբյան. 1973, Աղաբաբյան. 1977:*

[2] *Զաքարյան. 1997, Զաքարյան. 2003, Զաքարյան. 2008:*

[3] *Թամրազյան. 1981, Թամրազյան. 1978, 239, 268:*

[4] *Գասպարյան. 1990, Գասպարյան. 2022:*

[5] *Գասպարեան. 2020, 1025–1028:*

[6] *Չարենցի հետ: Հուշեր. 1997, Չարենցի հետ: Հուշեր. 2008:*

[7] *Չարենց. 1964, 37:*

[8] *Զաքարյան. 1987, 14: Գրականագետի մեջբերումը տե՛ս Թումանյան. 1995, 32–33:*

[9] *Ջրբաշյան. 1994, 409–445:*

Չարենցագիտությունը բազմիցս է անդրադարձել Չարենցի և հայ գրական մեծերի առնչություններին: Բանաստեղծն իր մեծ նախորդներից միշտ տվել է հատկապես երկու անուն՝ Տերյան և Թումանյան: Չարենցը նախ Տերյանի ազդեցությունն է իր վրա զգացել, ապա՝ Թումանյանի: «Դու Տերյանից սովորեցիր լսել տրտունջը ոգու, — // Ա՛յն, որ մեր մեջ նվում է միշտ, գանգատվում ու մորմոքում:// Բայց արդ՝ քո մեջ ծայր է առնում այլ մեղեդի մի անվերջ. — //Թումանյանի հուրն է անշեջ քո կրակը բորբոքում»[10]:

Ջրբաշյանը Չարենցին անվանում է Թումանյանի ստեղծագործության ամենամեծ գիտակը՝ փաստելով, որ հենց նա է արել թումանյանագիտության հանճարեղ կռահումները և բոլոր ժամանակների ամենամեծ թումանյանագետը, որ ոչ ոք այնպիսի լայն հայացքով չէր ընկալել ու գնահատել բանաստեղծին, ինչպես Չարենցը[11]: Հենց Թումանյանի ընկալման չարենցյան չգերազանցված բարձունքն էլ հիմք է դարձել թումանյանագիտության աշխատանքային ծրագրերի, որոնց հիմնական նպատակը հայոց քերթության անհաս Արարատի գնահատումն ու բացահայտումն է[12]:

Ժամանակակից քննադատությունը փորձում է հայտնաբերել գրական երկու հանճարների ստեղծագործական նոր աղերսներ՝ նկատի ունենալով «Չարենց երեք ուսումնասիրություն» գիրքը[13]:

Թումանյանի մասին չարենցյան ընկալման զարգացման ուղին

Հայ գրականության պատմության մեջ Թումանյանի ստեղծագործության արժևորման ուղին հարթ ու միագիծ չի եղել: Հեղափոխության ազդեցությամբ Չարենցի գրավոր ու բանավոր ելույթներում Թումանյանը հայտնվեց «անցյալի սեփականություն» դարձած դասական գրականության շրջագծում՝ որպես նահապետական գյուղի քնարերգու, կենցաղագիր, «գյուղացի ոտից գլուխ», «կենդանի անախրոնիզմ»[14], «անցած կենցաղի կենդանի ուրվական»[15]: Չարենցն այսպես է բնորոշել Թումանյանին «Խորհրդային Հայաստան» թերթում 1922 թ. հունիսին[16] «Երեքի դեկլարացիայի» հրապարակումից երկու օր անց[17]: Հետևելով Տերյանին՝ Չարենցն առաջ էր քաշում բանաստեղծի եզակիության, այսինքն՝ «ունիկում» լինելու դրույթը: Թումանյանի նշանակության մասին հրապարակային բեկումը Չարենցի մոտեցումներում տեղի ունեցավ արդեն կես տարի անց՝ 1923 թ. հունվարի 1-ին, երբ Չարենցը հայ գրականության նահապետին իր խոնարհումը բերել էր հանրահայտ իր նամակով՝ ուղղված «ամենասիրելի Թումանյանին»՝ «մեր խոսքի ամենամեծ վարպետին», «Նաիրյան խոսքի նահապետին», ով իր «վաստակած և իմաստուն կյանքը», իր հոգեկան բարիքներն ու գանձերն այնքան «շռայլ ձեռքով նվիրել

---

[10] Չ ա ր ե ն ց. 1968, 410:

[11] Ջ ր բ ա շ յ ա ն. 2000, 14–15:

[12] Ջ ր բ ա շ յ ա ն. 2000, 491: Տե՛ս նաև Ջ ր բ ա շ յ ա ն. 1994, 409–445:

[13] Ն ի կ ո ղ ո ս յ ա ն. 2022, 46:

[14] Չ ա ր ե ն ց. 1967, 17, 16:

[15] Չ ա ր ե ն ց. 1967, 18:

[16] Չարենցի «Ի՞նչ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը» հոդվածաշարը տե՛ս «Խորհրդային Հայաստան» (Երևան), 14, 16, 20, 21. VI. 1922:

[17] «Խորհրդային Հայաստան», 14, 16, 20, 21. VI. 1922:

էր հայրենի եզերքին»[18]: Ապա այդ ընկալումն ամրագրվեց Թումանյանի մահվան առիթ գրված Չարենցի հոդվածում 1923 թ. «Ինչ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը»[19] հոդվածի տպագրությունից ընդամենը 8 ամիս անց: Չարենցի բնորոշմամբ՝ Ամենայն հայոց բանաստեղծը վաղվա սերունդներին կրթելու առաքելություն ուներ, մեր լեզուն հասցրել էր անտեսանելի ճկունության՝ կենդանի պահելով գրական խոսքի կապը իր աղբյուրների հետ[20]: Այնուհետև Թումանյանի մասին Չարենցն իր գնահատականները շարադրեց «Երկու աշխարհի սահմանագծում» (1923 ապրիլի 3), «Եղբայրության շաղախը» (ապրիլի 15) հոդվածներում, որտեղ «կախարդ քնարերգուն» «կախարդական լարերով» դարձել է «հրաշք», «հնճարք» (որի հոմանիշը հանճարն է)՝ «զարմանալի զարմանք», մեկն «այն երջանիկներից, որոնց հոգեկան հմայքը, տաղանդի կարողությունը այնքան էր զորավոր, որ ճեղքում էր ամեն մի արգելք ու պատնեշ, հասնում էր ուրիշ սրտերի խորքը, դառնում էր հանուր ու մարդկային»[21]: Սակայն լեզվի հարցում Չարենցն ունեցել է վերապահումներ և բուռն բանավեճեր Բակունցի հետ[22]: Այս մոտեցումներն արտահայտվեցին «Ռեզյումեում», որը շարունակությունն էր «Մեր գրական լեզվի զարգացման տենդենցները և Դ. Դեմիրճյանի լեզուն» թեմայով 1934 թ. հունիսի 28-ին Գրողների տանը կարդացած Չարենցի զեկուցման[23]: Վ. Տերյանից ու Ստ. Զորյանից հետո Չարենցը վերստին անդրադարձավ Թումանյան–Պուշկին զուգահեռին՝ Թումանյանին անվանելով Հայաստանի ամենամեծ բանաստեղծը, որը օրգանապես մարմնավորում է Պուշկինի բազմակողմանիությունն ու ժողովրդայնությունը[24]: Չարենցը բարձր է գնահատել նաև Թումանյան-թարգմանչին՝ «Հայաստանի պուշկինյան հանձնաժողովում» խորագրով ռուսական թերթի թղթակցին տված հարցազրույցում արձանագրելով. «Պուշկինի բոլոր թարգմանություններից ժամանակակից պահանջներին բավարարում են միմիայն Հովհաննես Թումանյանի թարգմանությունները»[25]:

Ուշագրավ է, որ ոչ թե հոդվածներում, այլ գեղարվեստական գործերում Չարենցն ամբողջացրեց Թումանյանի տեղի ու դերի մասին իր պատկերացումները, որոնք հիմնաքարային ու անշրջանցելի արժեք ունեցան ոչ միայն թումանյանագիտության, այլև հայ գրականության ներկա ու ապագա յուրաքանչյուր պատմաբանի համար: «Գիրք ճանապարհի» ժողովածուն մեկընդմիշտ ամրագրեց Թումանյանի՝ որպես հայ մշակույթի ամենաբարձր արտահայտությունը լինելու չարենցյան ընկալումը: Ուշագրավ է, որ պոեզիայի միջոցով Չարենցը կարողացավ բացահայտել թումանյանական իմաստության ու արվեստի ողջ հմայքը շատ ավելի հմուտ, քան կարող էր անել որևէ քննադատ կամ գրող: Իր բանաստեղծություններում Չարենցը ձևակերպում է Թումանյանի բացառիկ մեծության բանաձևերը: Միջնադարյան տաղերգուներից սեր-

---

[18] Չ ա ր ե ն ց. 1967, 396:
[19] «Խորհրդային Հայաստան», 25. III. 1923:
[20] Չ ա ր ե ն ց. 1967, 74:
[21] Չ ա ր ե ն ց. 1967, 93:
[22] Չ ա ր ե ն ց. 1967, 245:
[23] Տե՛ս «Գրական թերթ», 10. VII. 1934:
[24] Չ ա ր ե ն ց. 1967, 356:
[25] Չ ա ր ե ն ց. 1967, 363:

ված բանաստեղծն ազգային ու համամարդկային դարավոր իղձերի այնպիսի մի խտացում է, որը նրան դարձնում է փիլիսոփայական առումով սկիզբ ու ակունք հետագա բոլոր սերունդների համար: Չարենցը գեղարվեստի լեզվով բացահայտում է Թումանյանի մեծության գաղտնիքը. նա մեծ էր, որովհետև ձուլվել ու ներհյուսվել էր ազգային միջավայրին, ժողովրդի նվիրական իղձերին («Նա մեծ էր հողո՛վ, արյունով:– Արմատներ ուներ նա հողում»)[26]: Մեծ էր, որովհետև կարողանում էր արտահայտել կյանքի անընդգրկելի տարերքը, անհատակ իմաստությունն ու խորությունը, անսկիզբ ու անվախճան տիեզերականը («Օվկիանի նման՝ իր ոգին ընդգրկել էր կյանքը անեզր»), մարդուն բարձրացնող ապագայի երազները («Եվ տեսնում էր չքնաղ երազներ»)[27]: Մեծ էր, որովհետև հայ պոեզիան հասցրեց համաշխարհային բարձունքների («Հոմերի, Գյոթե հետ մի օր՝ հավասար՝ նստել էր քեֆի»)[28]:

Թումանյանը՝ իբրև անհաս Արարատ, հատկապես կյանքի վերջին տարիներին Չարենցի համար դառնում է հետագա սերունդների և անձամբ իր համար որպես պոետական հանճարի ու մարդկային իմաստության բարձրակետ. «Կարո՞ղ եմ ես էլ // Լինել այդքան իմաստուն // Երբ լինեմ ծեր, // Կարողանա՞մ պիտի ես // Արդյոք ինչպես նա, // Այդքան հանգիստ ընդունել// Թե անկում, թե մահ»: Այսպիսի խոհերի էր մղում Չաերնցին նաև իր հալածանքից ծնված հոգեկան անկման, մենության տրամադրությունները[29]:

Չարենց–Թումանյան առնչությունը հուշերում

Թումանյանի ստեղծագործության արժևորման չարենցյան ուղին իր կեռմաններով դրսևորվել է նաև Չարենցի մասին հուշերում: Այդ հուշագրության էջերում խնդրի արծարծման առումով ուշագրավ են Ս. Մելիքսեթյանի, Վ. Աղասյանի, Ստ. Զորյանի, Հ. Գաբրիելյանի, Գ. Մահարու, Տ. Հախումյանի, Ս. Քոչարյանի, Հ. Սիրասի, Հ. Մկրտչյանի, Ն. Տաբիձեի և, հատկապես, Ն. Թումանյանի հուշերը:

Տերյանի և Թումանյանի պոեզիայի հանդեպ բանաստեղծի մերժողական դիրքորոշման, նրանց «հին» լինելու մասին վկայությունները պահպանվել են Ստ. Զորյանի հուշերում: Չարենցն ասել է. «Դու ուզում ես Թումանյանի նման գեղական բաներ գրեմ կամ Իսահակյանի պես աշուղական նեյնիմներ… Դրանց դարն անցել է»[30]: Այնուամենայնիվ, իրողություն է և այն, որ նույնիսկ իր մեծ նախորդներին մերժելու պահին Չարենցն անվերապահ ընդունում էր նրանց տաղանդը: Զորյանի հետ նույն զրույցի ընթացքում խոսելով գրողի ինքնատիպության մասին՝ բանաստեղծն ասում է. «– Այո, ինքնուրույնությունը մեծ բան է: Թումանյանը ինչ գրում է, ինքն է: Տերյանը ինչ գրում է՝ ինքն է …»[31]: 1927 թ. աշնանը Բաքվում հանդիպելով Վ. Աղասյանին՝ Չարենցը Թումանյանի մասին ասել է. «Ես շատ եմ սիրում այդ մեծ սրտի տեր մեծ

---

[26] Չ ա ր ե ն ց. 1968, 434:
[27] Չ ա ր ե ն ց. 1968, 433:
[28] Չ ա ր ե ն ց. 1968, 432:
[29] Գ ա ս պ ա ր յ ա ն. 1996, 22:
[30] Հուշեր. 1986, 76:
[31] Հուշեր. 1986, 83:

բանաստեղծին»[32]: Գ. Մահարին վկայում է, որ Չարենցն ամեն օր արթնանալիս հիմնականում չորս բանաստեղծների էր արտասանում՝ Տերյան, Եսենին, Թումանյան ու Մեծարենց[33]: Հ. Մկրտչյանի հետ իր տաղաչափության առանձնահատկությունների մասին զրուցելիս Չարենցը մերժում է հին հույներից սկսած տաղաչափության քարացած կանոնների մասին հավաստիացումները: Այդ մոտեցմանը նա հակադարձում է տաղաչափական արվեստում աշխարհի մեծ պոետների՝ Դանթեի, Վիրգիլիոսի, Լերմոնտովի ու Պուշկինի, նաև Թումանյանի ու Տերյանի բերած «մեծ էլ նորությունները»[34]: Վ. Արամունին (Հայ գրողների տան ցրիչը, որը նաև ստեղծագործում էր) հիշում է՝ 1929 թ., երբ Չարենցը լսում է, թե ինքն ու ընկերները՝ Թաթուլ Հուրյանը, Ղևոնդ Կոմունին և այլք Չարենց ու Մահարի են կարդում, դժգոհում է. «Նեղ եք, նեղ» և խորհուրդ է տալիս կարդալ Թումանյան[35]: Սկսնակ գրող Սամվել Գրիգորյանին շատ ածականներ ու մակդիրներ օգտագործելու համար նկատողություն անելով՝ Չարենցն իբրև օրինակ բերում է Թումանյանին. «Մի քառյակում 11 ածական ես շարել: Թումանյան կարդո՞ւմ ես: – Թումանյանի մոտ այդպիսի բան չես տեսնի:– Եվ նա արտասանեց Թումանյանի «Գութանի երգից» մի քառյակ:– Տեսնո՞ւմ ես,– շարունակեց նա,– տողի մեջ մի ածական չկա, պարզ է ու հասարակ: Բայց որքան գեղեցիկ է և հուզիչ: Այնուհետև մի ամբողջ ժամ բացատրեց, թե ինչպիսին պիտի լինի բանաստեղծությունը: Չարենցը բոլոր օրինակները բերում էր Թումանյանից»[36]: Պատանիների հետ հանդիպումներում նա խորհուրդ է տալիս ավելի շատ սովորել Թումանյանից, Պուշկինից, Նեկրասովից ու Տերյանից[37]: Այդ է վկայում նաև 1930 թ. Էջմիածնի 2-րդ դպրոցի աշակերտ Արծրուն Բաղդասարյանը[38]:

Չարենցի նկատմամբ Թումանյանի բարձր գնահատականի մասին է վկայում Ն. Տաբիձեն, ով Չարենցի անունն առաջին անգամ լսել էր Թումանյանից: «Հիշում եմ, – գրում է Նինոն, – ինչպես իրենով կախարդված՝ մենք նստել էինք իր սիրած քուրայի շուրջը, և ինքը ոգևորությամբ պատմում էր երիտասարդ բանաստեղծ Եղիշե Չարենցի մասին»[39]:

Չարենցը Թումանյանի դուստրերի հուշերում

Հայտնի է, որ հուշերը ոչ միշտ են ճշմարտապատում: Ժանրը ենթադրում է հուշագրի մոտեցումներից ծնվող մեկնություններ կամ սեփական անձի կարևորությունն ընդգծելու միտումներ: Այս առումով Թումանյանների՝ մասնավորապես՝ բանաստեղծի երկու դուստրերի՝ Աշխենի և Նվարդի հուշերն առավել հավաստի են, օրագրային գրառումների տեսքով, հետևաբար, փաստական անճշտություններն ու վրիպումները իրողությունները շարադրելիս գրեթե բացառված են: Այս իմաստով բանաստեղծի դուստրերի հուշերը կարևոր

---

[32] Հուշեր. 1986, 52:
[33] Հուշեր. 1986, 129:
[34] Հուշեր. 1986, 256:
[35] Հուշեր. 1986, 277:
[36] Հուշեր. 1986, 318:
[37] Հուշեր. 1986, 324:
[38] Հուշեր. 1986, 324:
[39] Հուշեր. 1986, 216:

դեր ունեն Չարենցի բուռն ու փոթորկոտ անհատականության բացահայտման, մարդկային իրական կերպարի ամբողջացման առումով:

Ա. Թումանյանը շարադրում է Չարենցի մասին Ս. Քոչարյանի՝ Թումանյանին վերաբերող հուշի այն հատվածը, որը հասկանալի նկատառումներով Ալ. Զաքարյանը դուրս էր թողել Եղիշե Չարենցի մասին հուշերի գրքից (1986): 1967 թ. մարտի 23 թվագրությամբ այդ հուշերը Ս. Քոչարյանն ուղարկել էր նախ Ա. Թումանյանին Մոսկվայից 1967 թ. մարտի 31-ին՝ հուշերի գրքում տպագրվելուց 19 տարի առաջ, որի ռուսերեն մեքենագիր օրինակը պահվում է Թումանյանի թանգարանում[40]*: Ս. Քոչարյանը Թումանյանի մահվան 3-րդ տարելիցին «Մարո» պոեմը կարդալու մտադրության մասին տեղեկացնում է Թումանյանի դուստրերին: Կրտսեր դուստրը՝ Թամարը, հավանություն չի տալիս, քանի որ պոեմը համարում էր իր հայրիկի համեմատաբար անկատար գործերից մեկը: Մինչդեռ Չարենցն այդ պոեմը բանաստեղծի հանճարեղ գործերի շարքին էր դասում: Քոչարյանը գրում է. «1926 թվականն էր: Ես պատմում եմ Աշխեն Թումանյանին Թումանյանի մահվան երրորդ տարելիցի առիթով պատրաստվող ծրագրի մասին, այդ թվում և «Մարոյի»: Թամարը՝ քույրերից կրտսերը, շատ դժգոհ էր …: Շատերին էին չփոթեցնում պոեմի արտաքուստ պարզունակ «կտրատած» չափն ու ռիթմը, մինչդեռ նրա ողջ հմայքը թաքնված է ասես նախածին պարզ խոսակցական հնչերանգի մեջ, ուր ամեն բառի շնորհիվ, տարիների շղարշի տակից, նշմարվում է ողբերգական կերպարը: Իր հուշերում պոետը հանում է նրա վրայից անցյալի ծածկոցը: Ստեղծագործ ոգով վերակերտված նա ձեռք է բերում ազդեցիկ ուժ ներկայում … Չարենցը խորությամբ ներթափանցում էր այդ հատուկ, թումանյանական ելևէջների մեջ, որոնք լիովին մերժում են ճոռոմ արտասանությունը: Նա շատ հաճախ խնդրում, համոզում, երբեմն էլ ստիպում էր ինձ կարդալ իր համար «Մարոն»:*

Այդպես եղավ և այն հիշարժան գիշերը: Ես կարդացի նրա համար գրեթե ամբողջը իմ Թումանյանից, այդ թվում՝ մի քանի անգամ «Մարոն»: Ես անչափ հոգնել էի, իսկ նա փակ աչքերով պառկած էր, ասես քնով էր անցել, բայց իմ մեկ րոպե անգամ հապաղելուն պես, իսկույն «Դե՛, ի՞նչ եղավ: Շարունակի՛ր»:

Ես կարդում էի մի պայմանով, որ նա չի ներարկի իրեն թմրանյութ: Ինձ նույնիսկ հաջողվեց համոզել նրան պատուհանից դուրս նետել սրվակների տուփը: Ավա՜ղ մի քանի ժամ անց նա գալարվում էր թմրամոլի տանջանքներից: Ուժեղ անձրև սկսվեց: Խորը գիշեր էր՝ մութ, անլուսին: Քաղաքը վաղուց քնած էր: Զանգում եմ նրա հեռու ազգականին, որը շտապ օգնության բժիշկ էր, բայց նա տեղում չէ: Մենք ստիպված իջանք ներքև: Զարհուրելի խավարում մենք ձեռքերով շոշափեցինք ամբողջ նեղ, ցեխոտ անցուղին՝ հյուրանոցի պատերի և մգլիթի միջև, գտանք տուփը՝ մեջը մի քանի չվնասված սրվակ: Ջղաձգված ինքն իրեն սրսկեց և վերջապես քնեց …

Որքան խորն էր Չարենցի սերը Թումանյանի հանդեպ, որ նրա բանաստեղծությունների մեղեդու ներքո, որ այնպես վերանար, որ դուրս նետեր թմրադեղը, առանց որի նա արդեն չէր կարող ապրել:

---

[40] *Տե՛ս Հովհ. Թումանյանի թանգարան, Գլխավոր դույքամատյան, 1881/2:*

Ես համոզված եմ, որ Թումանյանը նրան ոգու գվարթություն էր «ներարկում», հավատ էր ներշնչում, որ իր՝ Չարենցի համար կյանքը դեռ առջևում է»»[41]: Իսկ Թումանյանը, իրոք, անհանգստացել է Չարենցի հետագա ճակատագրի համար: Նա սրտի ցավով արդեն իր մահվան անկողնում 1923 թ. հունվարի 21-ին ասել է. «Ափսո՜ս շատ է խմում, էդ նրա վատ կողմերիցն է և նրան շատ կվնասի»[42]: Ցավ ու ափսոսանք է զգացել նաև Իսահակյանը, որի մտորումները Չարենցի մասին մեզ հասել են դարձյալ Թումանյանի դուստրերի միջոցով: 1947 թ. հունիսին Նվարդը գրում է. «Հարցրի Չարենցի մասին հուշեր գրելու ես: Շատ կտրուկ և մի քիչ էլ ջղայնացած ասաց. – Չեմ կարող գրել: Ես նրան մեծ բանաստեղծ չեմ ճանաչում: Նրանից մի քանի բան կմնա. 5–6 բան կմնա. «Հայաստանը», «Դանթեական առասպելը», «Ջիերը դոփում են», թույլ բաներ շատ ունի: Գոեհիկ է, հայհոյում է, մորֆինիստ, коняк, մի բանը 15 անգամ կրկնում է, վատը շատ է, քան թե լավը»[43]: Նվարդը փորձել է համոզել. «Ես էլ ասի, որ նրա մասին դժվար է գրելը, պետք է վատ կողմերը աքողել, ծածկել: Էդ առիթով պատմեց հետևյալը. «Մի դուքս, հարուստ իշխան, որի մի աչքը քոռ է, մի ոտքը կաղ, ինքն էլ տգեղ, կանչում է նկարիչներին, որ իրեն նկարեն: Մեկը նկարում է ինչպես ինքը կա, դուքսը բարկանում է, սա գռեհկություն է– грубый натурализм, երկրորդը մի գեղեցիկ տղամարդ է նկարում, սա էլ թե – լակիրովկա (лакировка), իսկ երրորդը դուքսին նկարում է ձիու վրա, նետ աղեղը ձեռին, նրան դնելու պահին – մեկ աչքը փակ: Սա հավանում է, – սա սոցիալիստական ռեալիզմ է – դու էլ էս ձևով գրի»[44]:

Բանաստեղծի դուստրերից Չարենցի մասին ավարտուն հուշեր է գրել Նվարդ Թումանյանը, քանի որ ամենից շատ, նաև աշխատանքի բերումով, նա է մտերիմ եղել բանաստեղծի հետ: Նրանք միմյանց ծանոթ էին 1921 թ., երբ Չարենցն առաջին անգամ գնաց Թիֆլիս՝ «Վոզնեսենսկայա 18»՝ անձամբ տեսնելու Թումանյանին: Նվարդի և Չարենցի հանդիպումները հաճախակի են դառնում 1932–1934 թթ., երբ Պետհրատում, որի գեղարվեստական բաժնի վարիչը վերջինս էր, նախապատրաստվում էր Թումանյանի երկերի ժողովածուի հրատարակությունը, որի նախաձեռնողներից մեկը Ստ. Զորյանի առաջարկով եղել է Չարենցը[45]: Բանաստեղծը գրքի խմբագիրն էր, Նվարդը՝ կազմողը: Տեսնելով, թե ինչպիսի բանասիրական տքնաջան աշխատանք է կատարում Նվարդը՝ Չարենցն ասել է. «Արդյոք իմ աղջիկն էլ մի օր կզբաղվի իմ գրական ժառանգությամբ»[46]: Չարենցը ծանոթ էր նաև Նվարդ հուշագրի սկզբունքներին՝ գրուցակցի խոսքը գրառել նույն օրը՝ բառացի ու ամբողջական: «Աշխա-

---

[41] Թումանյանի զավակները. 2011, 284–285:

[42] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 2009, 289:

[43] Նվարդ Թումանյանի անձնական արխիվ (այսուհետ՝ ՆԹԱ). Հուշեր Իսահակյանի մասին: Նվարդի արխիվի նյութերը մեզ է տրամադրել բանաստեղծի կրտսեր դուստր Թամար Թումանյանը (արխիվը մշակված չէ, այդ իսկ պատճառով թղթապանակ ու էջ չի նշվում):

[44] ՆԹԱ. Հուշեր Ավ. Իսահակյանի մասին:

[45] Չարենցի խմբագրությամբ Թումանյանի «Գեղարվեստական երկերը» առաջին լուրջ հրատարակությունն էր, որի վերաբերյալ որոշումն Անդրկովկասյան Ֆեդերացիան կայացրել էր դեռևս 1923 թ. ապրիլին:

[46] ՆԹԱ. Հուշեր Ավ. Իսահակյանի մասին:

տանքից հետո, – գրում է Նվարդը, – նա ընթրիք էր պատվիրում և խնդրում էր երեկոն միասին – անցկացնենք զրույցով: Նա խոսում էր և՛ ռուս պոետներից և՛ մեր գրողներից. ... առանձին սիրով ու հուզականությամբ էր խոսում Թումանյանի ու Տերյանի մասին: Նա խնդրում էր, որ իր զրույցները գրի առնեմ, բայց վերջում այնպես էր գինովանում, որ հիշողությանս մեջ քիչ բան էր մնում, նրա հայտնած մտքերը չէին ամբողջանում և ձև չէին ստանում»[47]:

Նվարդի հետ ծանոթության հենց սկզբից Չարենցին հետաքրքրել ու նաև զարմացրել է՝ ինչո՞ւ է Տերյանը իր չքնաղ «տրիոլետների մանյակը» նվիրել Նվարդին: Բանաստեղծի դստերը նվիրած գրքի մակագրության մեջ Չարենցը գրում է. «Նվարդին, որ է «Վարդերի վարդ» ոչ միայն իբրև չքնաղ Նաիրուհի, այլ իբրև դուստր մեծ պոետի և իբրև արժանի ժառանգը նրա, որ կոչված է փրկելու մոռացության մշուշից այն ամենը, ինչ ցրել է երբեմն մեր հանճարեղ պոետը իր պայծառ կյանքի լուսավոր ճանապարհին»[48]: Իսկ իր ստորագրությունից հետո ավելացնում է Տերյանի տողերը՝ «... Ձենք հանդիպի մենք արդեն, Նվա՛րդ // Թեկուզ բացվում են այնտեղ Վարդեր»: 1932 թ. օգոստոսի 8-ին Չարենցը գրառում է կատարել Նվարդի ալբոմում. «Շրջել է այստեղ Տերյանը, // Մշուշը նրան գուրգուրել է, – // – Անհուն է օրերիդ երգարանը // Եվ երգ են անցած օրերը», որից հետո ծանոթագրել է. «Այս վերջին քառյակն է Տերյանի մասին գրված (Լենինգրադում) մի բանաստեղծության, որը կորել է»[49]:

Ի դեպ, Ավ. Իսահակյանի վկայությամբ Շիրվանզադեն ու Չարենցը միշտ բանաստեղծի դստերը «Նուարդ» էին ասում[50]: Չարենցը «Նուարդին» առաջարկում է հրատարակել Տերյանի նամակները, ինչին Նվարդը պատրաստ չէր՝ դրանք խիստ անձնական համարելով: Լսելով Նվարդի բացասական պատասխանը՝ Չարենցն ասում է. «Ախ, եթե ես Տերյանից մի նամակ ունենայի, գոնե մի տող, ճակատիս փակցրած Աբովյան փողոցով հպարտությամբ ման կգայի ... Իսկ դու նրանից նամակներ ունես, պահում ես ու չես ուզում նույնիսկ հրատարակել»[51]: Նվարդը վկայում է. «Չարենցը շատ էր խնդրում, որ ես գրեմ իմ հուշերը Տերյանի մասին և նվիրեմ իրեն. «Կգրես և ինձ կնվիրես»»[52]: Շուտով Չարենցին հաջողվում է համոզել Թումանյանի դստերը, և Տերյանի նամակները որոշ կրճատումներով տպագրվում են «Նոր ուղի» հանդեսում[53]:

Նվարդի հուշերի հրատարակիչները դուրս են թողել ինչպես Նվարդի՝ Չարենցին տված որոշ բնութագրումներ, որոնք կապվում են նրա անհավասարակշիռ բնավորության հետ, այնպես էլ մի ամբողջ հատված Չարենցի ու Բակունցի մտերմության վկայություններից: Նվարդի հավաստիացմամբ՝ «Ակսել Բակունցը միակ մարդն էր, որ կարողանում էր զսպել Չարենցին, հանգս-

---

47 ՆԹԱ. Հուշեր Ավ. Իսահակյանի մասին:
48 ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:
49 ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:
50 ՆԹԱ. Հուշեր Ավ. Իսահակյանի մասին:
51 Հուշեր. 1986, 363:
52 ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:
53 «Նոր ուղի» հանդես (Երևան), 1931, 115–130: Որոշ կրճատումներով հրապարակվել էին Գանձայից, Պետերբուրգից և Սուխումից Նվարդին հասցեագրված Վ. Տերյանի 13 նամակ (1914 հունիս–1916 թ. գարուն): Թվագրությունը մոտավոր է՝ արված Ն. Թումանյանի կողմից:

տացնել և պահպանել նրա հավասարակշռությունը, նույնիսկ ամենակատաղի, անզուսպ դրության ժամանակ, Բակունցը նրան զգաստացնում էր: Չարենցն էլ հաշվի էր նստում նրա հետ, սիրում էր նրան և լսում»[54]*:*

Նվարդը ցավում էր, որ պոեզիայի տենչով լի «իսկական պոետի» կյանքը «դժբախտաբար լավ չէր անցնում»[55]*, «Չարենցն ինքն էլ գոհ չէր իր անհավասարակշիռ, բռնկվող բնավորության համար: Երբեմն հակասական քայլեր էր անում. մտքեր հայտնում, բարկանում, հետո զղջում էր, մեղմանում և իր արածի համար իրեն դատապարտում. նա այդ ժամանակները նմանվում էր անմեղ, բայց և չարաճճի երեխայի»*[56]*: Դուրս է մնացել նաև մի հատված, թե ինչպես էր բանաստեղծը սիրում ու կատարում «Ես պուճուր, յարս պուճուր» երգը:*

Նվարդի տպագիր և անտիպ հուշերի բովանդակությունը կարելի է բաժանել մի քանի շերտերի՝ 1. Չարենցի կյանքի ինչ-ինչ մանրամասներ, որոնք առհասարակ բնորոշ են հուշագրության ժանրին, 2. Չարենցի՝ Թումանյանին տրված բանավոր գնահատականները, 3. Թումանյանի վերաբերմունքը երիտասարդ Չարենցի հանդեպ, և 4. որ ամենակարևորն է, Չարենցի գեղարվեստական ժառանգության հարստացումը նրա գրչին պատկանող մի բանաստեղծության սևագրությամբ:

Ակնարկ Հովհ. Թումանյան-Չարենց հանդիպումներից

Նվարդի միջոցով մեզ են հասել Թումանյանի ու Չարենց հանդիպման մասին մանրամասներ: Երիտասարդ բանաստեղծի այցումները Թումանյանի հանդիպմանը սպասելիս, Նվարդի տպավորությամբ, շատ նման էին նույն իրավիճակներում Տերյանի այցումներին՝ ամոթխածություն, խոնարհում և ինչ-որ տեղ անհամարձակություն: Այդպես է եղել Թումանյանի և Չարենցի առաջին հանդիպումը 1921 թ. ամռանը: Նվարդը վկայում է. «Իրեն մի տեսակ ճնշված էր զգում, քաշվում էր Թումանյանից, և առանձին ակնածությամբ էր խոսում հետը»[57]*: Նվարդի հուշերը տպագրելիս նույնիսկ 1986 թ. աշխատել է խորհրդային մկրատը, հետևաբար, մենք դրանք կներկայացնենք նրա արխիվում պահվող հուշերի այն տարբերակից, որի մի մասն առայժմ անտիպ է: Ըստ տպագիր հուշերի՝ երկու բանաստեղծները 1921 թ. ամռանը հանդիպել են: Նվարդը գրում է. «1921 թ. ամառվա մի շոգ օր Չարենցը գալիս է մեր տուն՝ Թումանյանին այցելության: Այս անգամ նրա դուռը բացողը և ընդունողը Թումանյանի կինն էր: Նրա հարցմունքին՝ Թումանյանը տա՞նն է, պատասխանում է՝ տանն է, ներս է հրավիրում, բայց Չարենցը հրաժարվում է, թե էսպես չեմ գա … նա այդ օրը մի քիչ գինով էր, կեպկան ետ գցած … բլուզի կոճակները բաց … ու գնաց…»*[58]*:*

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Թումանյանը փորձում է հրատարակել գրական ամսագիր՝ «Նոր օր» վերնագրով, որի համար Չարենցը տրամադրում է 8 ութնյակ և 12 տրիոլետ: Հնարավոր է և հիշյալ առիթով Չա-

[54] ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:
[55] ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:
[56] ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:
[57] Հուշեր. 1986, 350:
[58] ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:

րենցը հանդիպեր Թումանյանին, բայց այդ մասին Նվարդը չէր կարող տեղյակ լինել: Ամսագիրը լույս չի տեսնում: 1931 թ. իր հայրիկի արխիվը մշակելիս Նվարդը վերադարձնում է այդ ստեղծագործությունների ձեռագրերը հեղինակին:

Չարենցը սիրում էր Թումանյանի քառյակները, անգիր էր ասում «Պատրանքը»՝ բնորոշելով «Гениально»*, հիանում էր «Հազարան բլբուլի» հատվածներով («Երգչի վիշտը»), «Վայրէջքով»: «Հիշում եմ, մի երեկո, – գրում է Նվարդը, – երբ տրամադրությունը բարձր էր, բավական երկար խոսեց Թումանյանից, համեմատելով նրան Հոմերոսի հետ՝ համարելով անկրկնելի մեծություն: Նրա գրական կյանքը համեմատում էր մարդկության կյանքի մանկության շրջանի հետ»[59]:*

Չարենց–Նվարդ Թումանյան. «Նվեր Նվարդին» ձոնը

Նվարդի և Չարենցի հարաբերությունները միանշանակ բարեկամական բնութագրել չենք կարող, համենայն դեպս 30-ականների առաջին տարիներին: 1934 թ. մարտի 14-ին արված գրառման մեջ Չարենցը դժգոհում է Թումանյանի բոլոր դուստրերից, հատկապես՝ Նվարդից, որ նրան միշտ հիշեցնում էր իր պաշտելի Տերյանին և Թումանյանին: Չարենցը գրում է. «Որքան չքնաղ տպավորություն են թողնում իմ վրա Տերյանի ձեռագրերը, որքան զզվելի, արգահատելի տպավորություն եմ ես ստանում Հովհաննես Թումանյանի աղջիկներին տեսնելիս կամ նրանց հետ որևէ գործ ունենալիս: Զարմանալի անհամապատասխան «ժառանգություն»: Այդքան գծուծ, արգահատելի, չարչիական և անմաքուր «ցեղ» – դժվար է երևակայել: Մանավանդ՝ Նվարդը: Եվ երևակայել, որ Տերյանը, այդ լուսավոր պոետը սիրել է նրան և նվիրել որքա՜ն գմայլելի բանաստեղծություններ»[60]: Հիրավի, Նվարդը գուցե իր տեսքով, իր արտաքին դրսևորումներով (թերևս լեզվական թերություն էր նրա արտագախոսությունը) առնվազն բանաստեղծին, իրոք, դուր չի եկել: Սակայն Նվարդի հմայքի մասին վկայում է այն, որ նա շատերի համար էր գեղարվեստական ներշնչանքի աղբյուր դարձել: Նրան բանաստեղծություններ են նվիրել ոչ միայն Թումանյանն ու Տերյանը, այլև՝ Հր. Աճառյանը, Ս. Գորոդեցկին, Ի. Գրիշաշվիլին և այլք: Նրանց միացավ նաև Չարենցը՝ ըստ ամենայնի վերանայելով իր վերաբերմունքը Նվարդի նկատմամբ:

Նվարդի արխիվում պահպանվում է Չարեցի՝ մինչ օրս գրական շրջաններին անհայտ «Նվեր Նվարդին» վերնագրով բանաստեղծության՝ Թումանյանի դստեր արտագրած օրինակը: Թվագրված է՝ «1935 / 1936»: Այսպես, բանաստեղծությունը գրվել է մեկ-երկու տարի անց օրագրային գրառումից: Քերթվածն անմշակ է, սևագիր, որոշ բառեր բացակայում են. կամ Նվարդը չի կարողացել կարդալ, կամ Չարենցը դեռ չէր գտել հարմար բառն ու հանգը: Դժվար է ասել, որն է եղել բանաստեղծության գրելու առիթը, սակայն հստակ է՝ Չարենցին ներշնչել է ոչ թե Նվարդն ինքնին, այլ Տերյանի սերը Նվարդի նկատմամբ: Բանաստեղծությունը 110 տող է, մենք կներկայացնենք միայն մի հատված.

[59] *ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:*
[60] *Գ ա ս պ ա ր յ ա ն. 1996, 159–160:*

Քո Հոր համար դու
Եղել ես, Նվարդ,
Մի ջահ լուսատու՝
Կենդանի մի վարդ
Տվել ես Նրան
Սիրով կենսաբեր
Բոլոր հուրհրան
Վարսերդ սաթե
<……………>
Դարձել ես ապա
Նվարդ վարդաբույր
Տերյանի համար
Եվ՛ ցնորք, և՛ քույր …
Տվել ես Նրան
Այնպիսի շողեր
Որ քեզ հավիտյան
… Բերել են նրբին
Հուրեր հուրհրան,
Տերյանի արևն
Սիրահար սրտի
Բառերով գրած …
…Նրբին վարդերով, –
Տերյանական, բուրյան
Տրիոլետներով
<……………>
Քո հայրը՝ պոետ
Մեծագույն, որ կա,
Թե հնում անգետ,
Թե օրում ներկա, –
Եվ Տերյանն ապա
Բանաստեղծ վերին՝
Տերյանն է այրել
Զքնաղ հույսերով
Սիրո անապակ
Եվ ցնորքների, –
Սիրով լուսազարդ
Քնարով անեղծ՝
………… կիզած

…Երկու բանաստեղծ
Քո մեջ են միայն
Արևն իրենց վառել, –
Լույս Մուսաների
Սոնետի շարքում
Անհասանելի
Բանաստեղծ երկու, –
Պոետ երկու մեծ,
Երկու աստղ, Նվարդ,
Որոնցով ենք մենք
Աշխարհում հպարտ,

… Լույս հմայքը քո
Ես ինչպե՞ս երգեմ,
Բայց պոետական
Ներբողը Նվարդ
Անշնորհք անգամ,
Եվ անգամ անհարթ, –

Տուրք է սրտաբուխ
Քնարով գրված, –
… Բայց չէ որ քեզ այն
Հղում է միայն
Մի հեգ բանաստեղծ…

Հնամյա երգի
Մեր նաիրական, –
Ապրում ես, ինչպես
Քնար կենդանի
Տերյանի հրկեզ
Եվ Թումանյանի…
Եվ նրանց կրտսեր
Եղբոր համար դու
Հրաշք ես լուսե,
Լապտեր լուսատու…
Աչքերում քո վառ, –
Որպես ճրագում
Աչքերում քո վառ, –
Որպես ճրագում
Տեսնում եմ նրանց
Հուրը ճառագուն…
Եվ նայում եմ երբ
Աչքերիդ, Նվարդ,
Նրանց լույսն է ջեռ
Ճառագում, Նվարդ…
Փառք, փառք քեզ, Նվարդ
Որ սիրով անհուն
Հուրը սրբազան
Անմար ես պահում…

Բանաստեղծությունը նվիրված էր Նվարդին՝ ի սեր իր մեծ նախորդների՝ Թումանյանի ու Տերյանի՝ Նվարդի հանդեպ ունեցած սիրո ու հարազատության նկատմամբ հարգանքի: Այն, ինչ թանկ էր իր մեծ նախորդներին, արժևորվում է նաև Չարենցի համար: Ըստ ամենայնի, Նվարդը բանաստեղծության սևագիրն արտագրել է 1937 թ. գարնանը Չարենցի բնակարանում, այնուհետև մեքենագրել ու պահել իր արխիվում: Չարենցի մասին Նվարդի տպագիր հուշերից դուրս է մնացել հենց 1937 թ. բանաստեղծի տուն Նվարդի երկու այցելությունների մասին հիշատակությունը: 1937 թ. ապրիլի 17-ին Նվարդը գնում է Չարենցի բնակարան՝ վերցնելու Թումանյանի ձեռագրերը, որոնք ժողովածուի հրատարակությունից հետո մնացել էին նրա մոտ: Իսկ «վերջին անգամ», այսինքն՝ 1937 թ. ապրիլի 17-ից հետո, Նվարդը հանդիպում է Չարենցին դարձյալ Լենինյան պողոտայի նրա նոր բնակարանում և, հավանաբար, հենց այդ օրն էլ ընթերցում է իրեն ձոնված բանաստեղծությունը: Այդ ենթադրության հիմք է տալիս Նվարդի հետևյալ վկայությունը. «Նա (Չարենցը – Ս. Հ.*) արդեն բեկված էր, կոտրված: Գունատ էր, նիհարած, իրեն զգում էր մենակ ու հալածական դրության մեջ: Իր գրասեղանի արկղից հանում էր տետրերով ձեռագրերը, թափում սեղանի վրա ու դժգոհում – ի՞նչ են ուզում ինձանից, ինչո՞ւ են ինձ հալածում, մի՞թե ես չեմ երգել հեղափոխությունը և մեր առաջնորդներին … և հուզվում»*[61]*:*

Չարենցի մահից հետո Նվարդը փորձում է գտնել իրեն նվիրված բանաստեղծության ձեռագիրը: Ինչպես պարզվում է Հ. Պողոսյանի հուշերից, 1935–1936 թթ. Չարենցը գրել է մի շարք ձոներ՝ նվիրված իր շրջապատի կանանց, որոնցից մեկն էլ Հռիփսիմեն էր: Այդ մասին նրան խոստովանել է Չարենցը՝ ասելով, որ բանաստեղծություններ է ձոնել և՛ Հռիփսիմեին, և՛ նրա որդուն՝ Կիմին . «Դե ձոն եմ գրել վերամբարձ պառնասյան ոգով»[62]*:*

Հ. Պողոսյանը նույնպես հետագայում փորձել է գտնել իրեն նվիրված բանաստեղծության ինքնագիրը: Այդ նպատակով նա և Նվարդը գնում են Չարենցի դուստր Արփենիկի տուն: «Մեր այդ անգամվա այցելության գլխավոր նպատակն էր ծանոթանալ Չարենցի այն ձեռագրերին, որոնք պահվում էին Արփիկի մոտ, – գրում է Հռիփսիմեն:– Եվ գուցե գտնել այն Ձոն-բանաստեղծությունները, որ տարիներ առաջ նվիրել էր ինձ ու տղայիս: Նույն նպատակով էր եկել նաև Նվարդը, որը նույնպես անհետ կորցրել էր իրեն ձոնած բանաստեղծությունը … Մոտ երկու ժամ ես ու Նվարդը, զսպած մեր սրտի հևքը, զննեցինք ձեռագրերը … Ավա՜ղ, չգտանք մեր փնտրածը (ընդգծումը մերն է– Ս. Հ.*)»*[63]*: Ավելի ուշ Ռ. Ղազարյանը իր մոտ եղած ձեռագրերից հայտնաբերում է Կիմին նվիրված բանաստեղծությունը, իսկ Նվարդին ձոնված բանաստեղծության ձեռագիրն առ այսօր չի հայտնաբերվել:*

Առաջին հայացքից անհնար է թվում, որ Չարենցը կարող էր բանաստեղծություն նվիրել Նվարդին, մանավանդ, եթե նկատի ունենանք Նվարդի ու Չարենցի միջև տարաձայնությունները՝ կապված Նվարդի անունը Թումանյանի երկերի հրատարակության տիտղոսաթերթում իբրև կազմող նշելու հետ[64]*:*

---

[61] *ՆԹԱ. Հուշեր Չարենցի մասին:*

[62] *Հուշեր. 1986, 211:*

[63] *Հուշեր. 1986, 212:*

[64] *Թումանյանի «Գեղարվեստական երկերի» հրատարակության համար Նվարդը տրամադրել էր բանաստեղծի ձեռագրերը, մեքենագրել էր տվել, կատարել էր բնագրերի նախնական համեմատություն, կազմել ժամանակագրական, այբբենական ցանկեր, բա-*

Նվարդի նկատմամբ մերթ դրական, մերթ բացասական վերաբերմունքը և հակասական տրամադրությունները խոչընդոտ չէին նրան բանաստեղծություն ձոնելու Չարենցի ցանկությանը: Ստ. Զորյանը վկայում է, որ Չարենցը ընկերներին, բարեկամներին վերաբերվում էր այնպես, ինչպես գրողներին՝ մի օր Բայրոնը հոյակապ բանաստեղծ էր, մյուս օրը՝ ձանձրալի ու շատախոս, Գյոթեն մի օր խորն ու գրավիչ էր, մյուս օրը՝ սառն ու դատողական: Ուշագրավ է հատկապես Տերյանի նկատմամբ վերաբերմունքը, երբ ոչ թե տարբեր շրջաններում, այլ միևնույն պահին նրան անվանում էր «հոգով լքված, արվեստով լիզված, մեղկ մի պոետ»[65], «Թքում» նրա պոեզիայի վրա և նույն պահին հիանում նրանով, պաշտում նրան, անվանում «չքնաղ պոետ» և անվերջ արտասանում Տերյան. «Այդպես վարվում էր ընկերների հետ, մերթ մոտ ու մտերիմ էր, մերթ սառչում էր»[66]: Թերևս, իրավացի են նրանք, ովքեր կարծում են, որ Չարենցի բնավորության այդ առանձնահատկությունը կատարելության ձգտման արդյունք էր թե՛ արվեստում, թե՛ կյանքում: Նույնն է վկայում Տիգրան Հախումյանը. «Դժվար էր նրա հետ ընկերություն անել, իր հարաբերություններում շատ էր անհավասարակշիռ. այսօր սիրալիր ու բացսիրտ կլիներ, վաղը՝ առանց առիթի, չոր, պաշտոնական ու սառը՝ սառույցի

ռարան և ծանոթագրություններ: Նյութերի վերջնական ընտրությունը, դրանց բաժինների և երկերի դասավորությունը Չարենցի գործառույթն էր: Նվարդն ակնկալում էր, որ գրքի վրա կգրվի նաև իր անունը՝ որպես կազմող: Չարենցը, սակայն, համաձայն չէր: Նվարդը ետ է պահանջում իր տրամադրած անտիպ նյութերը՝ չցանկանալով գործ ունենալ «Պետհրատի» հետ: Տիտղոսաթերթի վրա անունը գրելու փոխարեն Չարենցը խոստանում էր գրքի առաջաբանում ըստ արժանվույն գնահատել Նվարդի գործը, նշել, որ առանց նրա անհնար կլիներ գրքի հրատարակությունը: Հայաստանի Խորհրդային գրողների միության կազմկոմիտեին ուղղված դիմումով [«Մարտակոչ» (Թիֆլիս), 07. IV 1923] Չարենցը պահանջում է՝ ստիպել Նվարդին՝ ետ վերցնել անհիմն մեղադրանքները, հակառակ դեպքում ինքը կհրաժարվի խմբագրի աշխատանքներից: Կազմկոմիտեն հաշտեցնում է Նվարդին ու Չարենցին: Նվարդը, իր հերթին, Գրողների միությանը տված իր բացատրությունում (1933 թ. հուլիսի 30) խոստովանում է. «Ամենայն ազնվությամբ հայտնում եմ, որ ընկ. Չարենցի խմբագրի կոչումը համարել եմ ու համարում եմ անվիճելի, անկեղծությամբ ասեմ, որ նա խմբագրի աշխատանքը կատարել է ամենայն սիրով (ընդգծումը մերն է – Ս. Հ.)» (Չարենց. 1967, 751): Չարենցը խոստովանում է Նվարդի անփոխարինելի դերը գրքի պատրաստման աշխատանքներում, իսկ Նվարդը Չարենց-խմբագրի աշխատանքը գնահատում է բարձր: Նվարդի անունն այդպես էլ չի հայտնվում տիտղոսաթերթի վրա, որտեղ կազմող բառն ընդհանրապես բացակայում էր և գրված էր միայն «Խմբագրությամբ Եղիշե Չարենցի» (Թումանյան. 1934, III): Այնուամենայնիվ, 7.000 տպաքանակով «Գեղարվեստական երկերի» շրջերեսի վրա՝ առանձին էջի վրա ոչ շղատառերով գրված էր. «Տեքստը պատրաստեց Նվարդ Թումանյանը» (Թումանյան. 1934, VIII): Իսկ «Խմբագրողի կողմից» առաջաբանում Չարենցը գրել էր. «Ներկա հատորում զետեղված բոլոր նյութերը հավաքել, նախնական ստուգումը բնագրերի հետ կատարել և տարեթվերը ճշտել է ընկ. Նվարդ Թումանյանը, որը միաժամանակ կազմել է բառարանը և այբբենական ցանկը (ընդգծումը մերն է – Ս. Հ.)» (տե՛ս Թումանյան. 1934, VI):

[65] *Հուշեր. 1986, 74:*

[66] *Հուշեր. 1986, 80:*

պես: Նրան պետք էր շատ լավ ճանաչել՝ ուշադրություն չդարձնելու նրա տրամադրության ջերմության տատանումներին»[67]*:*

Եզրակացություն

Չարենց–Թումանյան ստեղծագործական առնչությունների անցյալ դարի վերջին տասնամյակներից եղել են ինչպես չարենցագետների, այնպես էլ՝ Թումանյանագետների ուշադրության կենտրոնում: Հանճարների ստեղծագործական գաղտնիքների մշտական փնտրտուքը նույնքան արդիական է դարձնում նրանց ստեղծագործական ավանդների, ազդեցությունների և աղերսների խնդիրը:

Չարենցի և Թումանյանի դուստր Նվարդի, հանճարի ու մտավորական կնոջ հարաբերությունները, չնայած որոշ վայրիվերումներին, եղել են մտերմական և բարեկամական: Դրանց շնորհիվ հարստացել է ինչպես Չարենցի մասին հուշագրությունը, այնպես էլ՝ պոետի գեղարվեստական ժառանգությունը: Նվարդի կյանքում Չարենցից իբրև թանկագին հուշեր մնացին 1933 թ. Չարենցի մակագրությունը Նվարդին նվիրած գրքի վրա, Թումանյանի դստեր ալբոմում Չարենցի՝ Տերյանին նվիրած, սակայն կորած բանաստեղծության մի քառատող (8. 08. 1932), և մինչ օրս գրական շրջաններին անհայտ մի ձոնբանաստեղծություն՝ «Նվեր Նվարդին» վերնագրով:

Սուսաննա Հովհաննիսյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ դասական գրականության և մշակույթի պատմություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 15 մենագրության, ավելի քան 200 գիտական, 280 գիտահանրամատչելի հոդվածների, 1 մեթոդական ձեռնարկի: ORCID:0000-0001-8718-6079; sushovh@mail.ru; susannahovhannisyan@litinst.sci.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղաբաբյան Ս. 1973, Եղիշե Չարենց, գիրք 1, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 442 էջ:

Աղաբաբյան Ս. 1977, Եղիշե Չարենց, գիրք 2, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 399 էջ:

Գասպարյան Դ. 1990, Ողբերգական Չարենցը, կյանքի և ստեղծագործության նորահայտ էջեր, Երևան, «Նաիրի» հրատ., 384 էջ:

Գասպարյան Դ. 1996, Եղիշե Չարենց. Նորահայտ էջեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 634 էջ.:

Գասպարեան Դ. 2020, Չարենց (Սողոմոնյան) Եղիշե Աբգարի. – «Հովհ. Թումանյան հանրագիտարան», Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1224 էջ:

Գասպարյան Դ. 2022, Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 804 էջ:

[67] *Հուշեր. 1986, 158:*

«Գրական թերթ» (Երևան), 10. VII. 1934:

Զաքարյան Ալ. 1987, Եղիշե Չարենց (մտորումներ մեծ բանաստեղծի ծննդյան 90-ամյակի առթիվ). – ՊԲՀ, № 2, էջ 3– 16:

Զաքարյան Ալ. 1989, Գրականության և պատմության ընթացքները, Երևան, «Խորհրդային գրող», 548 էջ:

Զաքարյան Ալ. 1997, Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը, հ. I, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 379 էջ:

Զաքարյան Ալ. 2003, Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը, հ. II, Երևան, ՀԳՄ հրատ., 432 էջ:

Զաքարյան Ալ. 2008, Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը, հ. III, Երևան, «Ֆենոմեն» հրատ., 532 էջ:

Թամրազյան Հ. 1974, Երիտասարդ Չարենցը, Երևան, «Հայաստան» հրատ., 219 էջ:

Թամրազյան Հ. 1978, Բանաստեղծը և ճակատագիրը, Երևան, «Սովետական գրող», 390 էջ:

Թամրազյան Հ. 1981, Ե. Չարենցը (ուսումնասիրություն), Երևան, «Սովետական գրող» հրատ., 472 էջ:

Թումանյանի թանգարան, Գլխավոր գույքամատյան, 1881/2:

Թումանյան Հ. 1934, Գեղարվեստական երկեր, խմբ.՝ Ե. Չարենցի, տեքստը պատրաստեց Նվ. Թումանյան, Երևան, Պետհրատ., 366 էջ:

Թումանյան Հ. 1995, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 7, Քննադատություն և հրապարակախոսություն (1913-1922), Երևան, «Գիտություն» հրատ., 718 էջ:

Թումանյան Ն. 2009, Հուշեր և զրույցներ, Երևան, «էդիթ Պրինտ» հրատ. (երրորդ հրատարակություն), 336 էջ:

Թումանյանի զավակները. 2011, Աշխեն, Հուշեր և ընտանեկան պատմություններ, (Արևելք-Արևմուտք մատենաշար), Երևան, «Մուղնի» հրատ., 408 էջ:

«Խորհրդային Հայաստան», 25. III. 1923:

Հուշեր. 1986, Եղիշե Չարենցի մասին, Երևան, «Սովետական գրող» հրատ., 501 էջ:

«Մարտակոչ» (Թիֆլիս), 07. IV 1923:

Նիկողոսյան Արք. 2022, Չարենց երեք ուսումնասիրություն, Երևան, «Անտարես» հրատ., 93 էջ:

«Նոր ուղի» հանդես (Երևան), 1931, գիրք չորրորդ, № 4, էջ 115–130:

Նվարդ Թումանյանի անձնական արխիվ. Հուշեր Իսահակյանի մասին: Հուշեր Չարենցի մասին:

Չարենց Ե. 1922, Ի՞նչ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը (մեր դեկլարացիայի առթիվ). – «Խորհրդային Հայաստան» (Երևան), 14, 16, 20, 21. VI. 1922:

Չարենց Ե. 1964, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, խմբ.՝ Ինճիկյան Ա. Մ., տեքստը պատրաստեց և ծանոթագրեց՝ Զաքարյան Ա. Գ., Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ. 374 էջ:

Չարենց Ե. 1967, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, խմբ.՝ Աղաբաբյան Ս. Բ, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց՝ Զաքարյան Ալ., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 803 էջ:

Չարենց Ե. 1968, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, խմբ.՝ Պ. Սևակ, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց՝ Զաքարյան Ա. Գ., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ. 625 էջ:

Չարենցի հետ: Հուշեր. 1997, կազմ. և խմբ.՝ Դ. Գասպարյան, Երևան, «Նաիրի», 424 էջ:

Չարենցի հետ: Հուշեր. 2008, մաս 2-րդ, կազմ. և խմբ.՝ Դ. Գասպարյան, Երևան, «Նաիրի», 440 էջ:

Ջրբաշյան Էդ. 1994, Թումանյանը և հայ գրականության ավանդույթները, Երևան, «Գիտություն» հրատ., 511 էջ:

Ջրբաշյան Էդ. 2000, Թումանյանի գրական ժառանգությունը (ուսումնասիրություններ ու հոդվածներ), Երևան, «Գիտություն» հրատ., 513 էջ:

ЧАРЕНЦ– ТУМАНЯНЫ: НЕИЗВЕСТНАЯ СТРАНИЦА ХУДОЖЕСТВЕННОГО НАСЛЕДИЯ ЧАРЕНЦА

СУСАННА ОВАНЕСЯН

Резюме

Ключевые слова: Ов. Туманян, Чаренц, Н. Туманян, черновик неизвестного стихотворения Чаренца, сборник «Художественные произведения», «Посвящение Нвард».

Творческие и личные связи Егише Чаренца и Ованеса Туманяна находились в последние десятилетия прошлого века в центре внимания как чаренцоведов так и туманяноведов. Исследователи пришли к выводу, что поэзия Чаренца в значительной степени является продолжением литературных традиций Туманяна. Оценки и взгляды Чаренца о месте и роли Туманяна в истории армянской литературы, выраженные как в критических, так и в художественных произведениях, были знаковыми и стали краеугольным камнем для туманяноведения.

Оценочные высказывания Туманяна о Чаренце и Чаренца о Туманяне большей частью сохранились в воспоминаниях дочери Туманяна – Нвард. Взаимоотношения Нвард и Чаренца нельзя назвать однозначно дружескими. Именно в этом смысле большой интерес представляет обстоятельство посвящения стихотворения человеку, к которому поэт не испытывал особых симпатий. Стихотворение «Посвящение Нвард» было написано преимущественно под сильным воздействием поэтического творчества Туманяна и Теряна. То, что было дорого его великим предшественникам, было ценно и для Чаренца. Это стихотворное посвящение, состоявшее из 110 строк, представляет собой необработанный черновой набросок, написанный весной 1937 г. Оно было переписано рукой Нвард в квартире Чаренца предположительно 17 апреля того же года. После смерти поэта Нвард пыталась найти автограф стихотворения в квартире дочери поэта Арпеник. Поиски не дали результатов.

Сусанна Ованесян – д. филол. н., доцент, ведущий научный сотрудник отдела древней армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: история армянской классической литературы и культуры,, туманяноведение. Автор 15 монографий, более 200 научных и 280 научно-популярных статей. ORCID:0000-0001-8718-6079; sushovh@mail.ru; susannahovhannisyan@litinst.sci.am,

CHARENTS-TUMANYAN: AN UNKNOWN PAGE OF THE ARTISTIC HERITAGE OF YEGHISHE CHARENTS

SUSANNA HOVHANNISYAN

S u m m a r y

Keywords: Hovhannes Tumanyan, Charents, Nvard Tumanyan, a draft of an unknown poem by Charents, collection "Works of Art", "Dedication to Nvard".

The creative and personal ties of Yeghishe Charents and Hovhannes Tumanyan were in the focus of attention of both Charents and Tumanyan scholars in the last decades of the last century. The researchers concluded that Charents' poetry is largely a continuation of Tumanyan's literary traditions. Charents' assessments and views on Tumanyan's place and role in the history of Armenian literature, expressed both in critical and artistic works, were significant and became the cornerstone for Tumanyan studies.

Tumanyan's evaluative statements about Charents and Charents' about Tumanyan are mostly preserved in the memories of Tumanyan's daughter, Nvard. The relationship between Nvard and Charents cannot be called unambiguously friendly. It is in this sense that the circumstance of dedicating a poem to a person for whom the poet had no special sympathy is of great interest. The poem "Dedication to Nvard" was written mainly under the strong influence of the poetic work of Tumanyan and Teryan. What was dear to his great predecessors was also valuable for Charents. This dedication poem, consisting of 110 lines, is a rough draft written in the spring of 1937. Nvard copied the poem in Charents' apartment, presumably on April 17 of the same year. After the poet's death, Nvard tried to find an autograph of the poem in the apartment of the poet's daughter Arpenik. The search yielded no results.

Susanna Hovhannisyan – Doctor of Sciences in Philology, Associate Professor, Leading Researcher at the Department of Ancient Armenian Literature of the Institute of Literature after M. Abeghyan of NAS RA. Scientific interests: history of Armenian classical literature and culture, Tumanyan studies. Author of 15 monographs, more than 200 scientific and about 280 popular-scientific articles. ORCID:0000-0001-8718-6079; sushovh@mail.ru; susannahovhannisyan@litinst.sci.am